փորձն անյաջող է ամէն տեսակէտով, բայց իր փորձելու յօժարութիւնը արժանի է դնահատութեան: Նորեկի համարձակութեամբ նա «դիւրատես» լուծելի է համարում մեր հնադոյն տաղաչափութեան կնճիռը: Եթէ նա ծանօթ լինէր հայ գիտական գրականութեան՝ պիտի տեսնէր որ հայագիտութիւնն անչուն գիւղ չէ, ուր նա կարող է անվայտ ման գալ...

* * *

Թողնենք Լ. Գրէյին, բայց չարունակենք մի փոքր եւս դեգերել Գողթան երգերի շուրջը: Ես ինքս աւելի քան մի տարի է յամառաբար աշխատում եմ Գողթան երգերի տաղաչափութիւնը գտնելու: Աշխատանքիս ընթացքին ինձ թւում է, որ գտած եմ Գողթան երգերի մի նոր հատուած «Երկնէր երկին»ի մեծութեան: Գրում եմ «ինձ թւում է», որովհետեւ հմտութիւնս շատ սահմանափակ է Գողթան երգերի մասին եղած գրականութեան մարզի մէջ: Գուցէ մի ուրիշը որեւէ թերթի մէջ ինձանից առաջ արդէն ուշադրութիւն է դարձրել այդ հատուածի վրայ: Հմուտներին կը մնայ որոշել թէ որը որոց է:

Ես կարծում եմ, որ Սաթենիկի դիմումը Արտաշէսին մեր վիպասանքի հատուածներից մէկն է: Գիտեմ, որ շատերն են գրած այն մասին, որ Արտաշէսի պատմութեան այդ կտորը մեր հին վիպասանքից է առնուած. բայց չեմ յիշում, որ մէկն այդ հատուածը երգ համարած լինէր: Խորենացին գրում է Սահակ Բագրատունուն (Բ. խբ.). «Արտաշիսի վերջնոյ գործք՝ բաղում ինչ յայտնի են քեզ ի վիպասանացն, որ պատմին ի Գողթան — չինել զքաղաքն, եւ խնամութիւն ընդ Ալանս, եւ ծնունդք զարմիցն»...եւայլն: Այստեղից տեսնում ենք, որ «խնամութիւն ընդ Ալանս» Գողթան երգերի նիւթ է եղած: Թէեւ Սաթենիկի խօսքերի համար Խորենացին յատկապէս չի յիշատակում թէ երգուած են՝ բայց վիպասանքի մաս կազմելուն տարակոյս չկայ: Այդ խօսքերը ես առայժմ տրոհում եմ այսպէս (Բ. ծ):

Քեզ ասեմ, այր քաջ Արտաշէս,
Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց.
Եկ հաւանեաց բանիցս աշազեղոյ
Դստերս Ալանաց՝ տալ զպատանիդ.
Զի վասն միոյ քինու
Ոչ է օրէն դիւցազանց՝
Զայլոց դիւցազանց զարմից
Բառնալ զկենդանութիւն,
Կամ ծառայեցուցանելով
Ի ստրկաց կարգի պահել.
Եւ թշնամութիւն յաւիտենական
Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց
Հաստատել:

Վերջին թերատ տողին հաւանօրէն կցւում էր հետեւեալ հատուածի սկիզբը: Սաթենիկի հօր դառող խօսքերը նոյնպէս երգի հատուած են: Այս մասին կարծեմ խօսել են ուրիշները, թէեւ չեմ կարող ասել թէ ո՛վ եւ ո՛րտեղ: Այդ խօսքերն են. «Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս հազարս ի հազարաց եւ բիւրս ի բիւրոց ընդ քաջազգւոյ կոյս օրիորդիս Ալանաց»:

Առ այժմ զոհանում եմ յայտնելով «դիւտիս» մասին:

* * *

Օգտակար եմ համարում այստեղ մի քանի դիտողութիւններ անել եւ դնել մի քանի հարցեր, որոնց պատասխանը պէտք է ունենայ ամէն ոք, որ ուզում է հետազօտել Գողթան երգերի տաղաչափութիւնը:

Նախ պէտք է նկատել, որ Գողթան երգերը յօրինուած են շատ աւելի վաղ, քան դրի են առնուած: Նրանց մեծ մասը վերաբերում է Արտաշէս թագաւորին, որ ապրում էր Քրիստոսից երկու դար առաջ: Ալանաց պատերազմը, Սաթենիկի հարսանիքը, Արտաշէսի անէծքը որդուն եւայլն՝ սրանք նիւթեր են, որ մշակուած են իբր երգ թագաւորի կենդանութեան ժամանակ կամ մահից քիչ յետոյ: Մինչդեռ նրանք գրի են առնուած Ե. կամ Է. դարում՝ նայած թէ Խորենացուն ո՞ր դարի հեղինակ կը համարենք: Մօտ եօթ կամ ինն դար ապրելով ժողովուրդի բերանում՝ նրանք անչուշտ ենթարկուած են որոշ փոփոխութեան: Թէ որքան խորն են այդ փոփոխութիւնները եւ որքան բազմազան՝ սա կարող է յատուկ քննութեան նիւթ դառնալ:

Ի՞նչ կերպարանք ունէին այդ երգերն այն ժամանակ, երբ Խորենացին լսեց եւ գրի առաւ: Ուրիշ խօսքով, ո՞րն է այդ երգերի հարազատ ձեւը Ե. կամ Է. դարում՝ Խորենացու գրչի տակ: Այս հարցումի մօտաւոր պատաս-